

ԳԵՂԱՐՒԵՍՄԱՐԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԵՐԳԻՉԱՐԱՆԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԹԱՆԹԱԹԵՐԹ

№ 5 կիրակի 3 փետրուարի երկրորդ տարի 1891

ՀԱՄԼԻՑ

Համլէտ.

Մարդուս մարմինը հոքան ժամանակ կարող է մնալ գետնի տակ առանց ներսուելու:

Գերեզմանատիրոջ.

Եթէ կենդանի ժամանակ արդէն նեխուած չէ, ութ կամ ինն տարի կըմնայ. Դաշզործինը ինը տարի է մնում . . .

Համլէտ.

Ո՞ւմ է այս յանգը.

Գերեզմանատիրոջ.

Եօրիկի գանգն է, որ մեր թագաւորի ծաղրածուն էր.

Համլէտ.

Ա՞յս [առնելով գանգը].

Գերեզմանատիրոջ

Հէնց այդ.

Համլէտ.

Խեղճ Եօրիկ. Ես նրան ճանաչում էի, Հօրացիս. Զարմանալի սրախօս եւ խեղկատակ մարդ էր. Սա ինձ հազար անգամ մեզ է տուել իր ուսերի վրայ. բայց այժմ—այժմ որքան զզուելի է. սիրտս խառնում է. Այստեղ շրթունքներ կային, որոնց ես շատ անգամ համբուրում էի. Ո՞ւր են քո սրախօսութիւնները, երգերդ ու կատակները, որոնք ծիծաղից ուշաթափ էին անում ամենքին. Կորաւ քոլորը. Այժմ գնա գեղեցկուհու առանձնասենեակը եւ ասա նրան, որ եթէ նա մի մատի հաստութեամբ ներկ անգամ քսէ իր երեսին, դարձեալ սրա պէս է դառնալու եւ ստիպելու է վրան ծիծաղել. Ասա ինձ, Հօրացիս՞ . . .

Հ Ա Մ Լ Ի Ց

„Խեղճ Եօրիկ. ես նրան ճանաչում էի...

Հօրացիս.

Ի՞նչ կը հրամայէք, իշխան.

Համլէտ.

Ի՞նչ ես կարծում, մի՞թէ Աղէքսանդր Մակեդոնացին էլ հողի մէջ այսպէս էր.

Հօրացիս.

Ճիշտ այդպէս.

Համլէտ

Եւ այսպէս գարշելի հոտ ունէր . . . Փի՞ . . . (ծգում է գանգը).

Համլէտ, Շեքսպիր
արարուած Ե.

—

Ո՞վ էր ճանաչում Համլէտին. ով չէ ժամերով գրոյց արել այդ վշտի հանճարի հետ, որին ստեղծագործել է Շեքսպիրի համաշխարհային հանճարը. Ո՞ր ինտելիգենտը չունի իր սրտի խորքում նստած մի Համլէտ, եւ դրանցից որը չէ իր վշտերը քենցնում Համլէտի վշտերին նմանելով. Բայց եւ ո՞ր հայը չէ յիշում ա. Ադամեանին Համլէտի անունը յանելիս։ Ադամեանն էր, որ առաջին անգամ հայ բեմի վրայ պատկերացրեց Շեքսպիրի Համլէտը. Ուրեմն յիշենք նրան այժմ եւ կատարենք մեր պարտքը...

ՎԵՐՋԻՆ ՎԵՐՖԵՐ

Զ.

ՀԱՑ, ՋՈՒՐ

Վէս դիշերին Զրաբերդում պաշարուածները խոր քնի մէջ էին։ Միայն երկու պահապաններն էին արթուն, ոտքի վրայ և սպասում էին, թէ երբ կըղայ իրանց քնելու հերթը. նրանք արդէն ձանձրացել էին, շուտ շուտ նայում էին երկնքի աստղերին, որ որոշեն, թէ իրանց ընկերները որքան ժամանակ պիտի քնեն։ Քնի քաղցրութիւնը դերել էր այդ մարդկանց և միայն պարտքը հարկադրում էր մի կերպ դիմադրել այդ քաղցրութեան հրապոյրներին։

Այդ դիշեր երկու մարդիկ կային բերդում, որոնք միայն չըդիտէին թէ ինչ է քնի քաղցրութիւնը։ Դրանք զգուշութեամբ գործում էին ստորերկրեայ նեղ խուզարկներում . . .

Բնութիւնը, տալով Զրաբերդին մի անմատչելի բերդի բոլոր յատկութիւնները, խնայել էր ամենագլխաւորը —ջուրը։ Պաշարուածները ջուր էին վերցնում Թարթար գետից, հասնելով նրա ջրերին ստորերկրեայ մի խոր ականով, որ փորուած էր բերդի դլխից ասպիճանների ձևով և կոչւում էր ջրագողի ճանապարհ։ Ջուր գողացողը վերցնում էր կուժը, դողդողալով իջնում էր այդ չատ նեղ և խաւար փորուածքով, մինչև որ հասնում էր ականի բերանին, որին զարնելով վազում է Թարթարը. ականի բերանը դրսի կողմից ծածկուած էր մի պատի կտորով, որ չէր թոյլ տալիս պաշարող թշնամուն տեսնել ջուր վերցնողին։

Այդ դիշեր ջրագողի ճանապարհը դաւաճանութեան ճանապարհ էր դառել։ Ալիւրի և ցորենի ամբարը բաց էր և յիշեալ երկու մարդիկը մեծ ջուլներ լցրած ցած էին դլորում, իրանք էլ ետևից դնալով, մարդկանց ուտելիքը թափում էին գետի մէջ և ապա դատարկ ջուլները վերցրած էլի մտնում էին հացատուն։ Ոչ ոք չէր տեսնում նրանց այդ գործողութիւնը, ոչ ոք չըդիտէր, որ ամբարը արագ դատարկւում է։ Թարթարը սովորականի պէս վըշվըշում էր և նրա փրփրած ալիքները մի ակնթարթում ոչնչացնում էին մարդկանց ապրուստը։

Այդ գործը կատարում էին Ստեփանն ու Աթանը։

Տեսնելով որ հացի ամբարում քիչ բան մնաց, նրանք վախենալով, որ յանկարծ չըբռնուին, մի անգամ էլ իջան ականի ծայրը, սկսեցին ըրիչներով քանդել այն պատի կտորը, որ պաշտպանում էր ջուր գողացողներին։ Քարերը միմեանց ետևից դետն էին ընկնում և նրանց արձակած ձայնը խկոյն կորչում էր ջրերի աղմուկի մէջ. վերևում, պատի ետևը նստած պահապանները ոչինչ չէին լսում։

Այդ բոլորը յաջողութեամբ դլուխ բերելուց յետոյ, այդ երկու մարդիկը ցած դլորեցին մի մեծ քար, որ կիսով չափ ծածկեց ականի բերանը և ապա յետ դարձան։

Ստեփանը դնաց իր հարսի մօտ։ Մութ սենեակում ամենքը քնած խռմփում էին։ Այդ ձայների մէջ երբեմն լսւում էին որոշ հասկանալի խօսքեր, որոնք երբեմն ընդհատւում էին և երբեմն կանոնաւոր կերպով չարունակւում էին միմեանց ետևից։ Մէկը, երևի, խօսում էր երազում։ Ստեփանն խկոյն ճանաչեց, որ այդպէս խօսողը Սանամն էր. նա սկսեց ականջ դնել և իմացաւ, որ Սանամը պատմում էր այդ օրւայ արածները։ Նա ծիծաղեց, մինչև անգամ ցած ձայնով մի փաղաքշական խօսք ասաց և իր ստացած բանալին դնելով նրա արխալուղի դրպանը, պառկեց։ Քունը նրան էլ խկոյն գրկեց, հեռացրեց այս աշխարհից։

Քնի ժամանակն անցաւ, մարդիկ դլուխները բարձրացրին, երբ արեդակը տարածեց իր կարմիր լոյսը հըսկայ Մուսալի դագաթներին։ Խկոյն ծուխը մլաց բերդի տների երդիկներից, մելիքի ծառաներից երկուսը ջրի դընացին ստորերկրեայ քարէ ճանապարհով։ Նրանք չատ ուշ յետ դարձան դատարկ և յայտնեցին եղելութիւնը։ Շատերը նրանց չէին հաւատում, բայց և այնպէս, բերդի մէջ աղմուկ ընկաւ։

Ձայների վրայ Ղամար-Սօլթանը տանից դուրս եկաւ և իմանալով թէ ինչն է պատճառը, սկսեց սիրտ տալ ամենքին։ Նա կանչեց Աւրաքօլուն և երկու մարդ դնելով նրա հետ, ուղարկեց ջրի ճանապարհը չինելու։ Ստեփանը յայտնեց, որ ինքը կըկանդնէ Աւրաքօլու տեղը և իր ընկերի հետ դնաց բերդի դռների մօտ։

Բայց մենակ այդ չէր պաշարուածների դժբախտութիւնը։

Ինչպէս և ամեն օր, Սանամը բանալին վերցրած դնաց հացի ամբարը բանալու. կշիռի մօտ արդէն հաւաքւել էր կանանց բազմութիւնը։ Դուռը բանալով, Սանամը յանկարծ չէմքին կպաւ. նա, կարծես, չէր հաւատում իր աչքերին, նա զարմանքից և երկիւղից քարացած էր։ Նա երբ տեսաւ, որ իր աչքերը միշտ մի և նոյնն են ցոյց տալիս, նա ներս վազեց ոտները գետնին զարկելով, սկսեց բոլոր պուճախները որոնել։ Ոչինչ չէր մնացել. մի տեղ քիչ ալիւր և մի քանի բուռն դարի էր երևում։ Նա միայն այդ բոպէին հասկացաւ, որ բանալին երէկ ուրիշին էր տուել, հասկացաւ, թէ ով է այդ բանն արել. և այդ բոլոր մտքերից նա մի բոպէում թուլացաւ, նստեց, ընկաւ դետնի վրայ։ Նրա ետևից ներս մտած մարդը դուրս փախաւ և սկսեց աղաղակել.

—Հացը գողացել են, քաղցած մնացինք . . .

Սարսափը տիրեց ամենքին։ Ղամար-Սօլթանը ներս վազեց, տեսաւ Սանամին և այնպէս ճչաց, որ նա տեղից վեր թռաւ և խելքը կորցրածի պէս սկսեց դէս ու դէն վազել, անկապ և անմիտ խօսքեր արտասանել, որոնցից մէկն էր և Ստեփանի անունը։ Սկսեց հարց ու փորձը, որ բաց արաւ բանալու պատմութիւնը։ «Ստեփան, Ստեփան» գուռում էին պաշարուածները, նրան էին որոնում։ Բայց նա և Աթանը չըկային. պարսպի վրայ կախ ընկած չլանը ցոյց էր տալիս որ նրանք փախել էին այն ժամանակ, երբ «հաց չըկայ, հացը գողացել են» ձայները հաւաքել էին բոլոր պահապաններին։

Հաց չըկայ . . . Ահա խօսքեր, որ մի պաշարուած բերդի մէջ վերջին օրհասն են նշանակում։—Հաց չըկայ... Բայց այդ մարդիկ չեն կարող հող ուտել . . . Արդէն երկու շաբաթից աւելի էր, որ նրանք չոր հացով էին ապրում։ Սովը, այդ դազանը, որ խնայել չըդիտէ, դալիս էր, արդէն իր սարսափելի ճանդերը դրել էր Զրաբերդի ահարկու ժայռերի վրայ։ Ամենքի ձեռքերը թուլացան, անէծք, աղաղակ, լաց միմեանց խառնուեցան։ Ամենից ժիր և անվախ մարդն էլ չըդիտէր, թէ ինչպէս բանայ բերանը և ինչ խօսէ։ Հաց չըկայ, ի՞նչ անեն . . .

Շուտով Աւրաքօլին էլ դուրս եկաւ ջրի ճանապարհի ծակից։ Այդ մարդու դէմքը դաւնութիւն և զզուանք էր արտայայտում։

—Բանը դժուարացել է, ասաց նա,—ջրի հանապարհը փչացել է։

Եւ յետոյ պատմեց, որ թէև ստորերկրեայ անցքի բերանում մնացած քարը կարելի է կոտրատել, բայց ջրի գնացողներից քչերը ողջ յետ կըդառնան, որովհետև դեռ միւս ափից քարերով էլ կարող են ջուր վերցնողին սպանել։

Ցուսահատութիւնը վերջին ծայրին հասաւ։ Մարդիկ սկսեցին դուռդուռալ, աղաղակել. նրանք դէս ու դէն էին նայում, միշտ միևնոյն էին կրկնում, թէ չըգիտեն թէ ինչ ցաւ տան գլխներին։ Մի քանիսը դատն ելքը և կանչում էին.

—Փախչե՛լ, փախչե՛լ . . .

Բայց ո՞ւր փախչել, դէպի ո՞ր կողմը գնալ։

Այդ ահարկու բերդը միայն մի կողմից էր կարող բաց թողնել իր մէջ փակւածներին. իսկ այդ կողմի ճանապարհի վրայ աւելի և աւելի խտանում էին թուրքերի խմբերը։ Թարթարի երկու ափերը պատած անտառները թնդում էին նրանց ձայներից։ Լեշի վրայ հաւաքւած ագռաւների պէս նրանք կռանչում էին, ծւատելու, կտոր կտոր անելու էին պատրաստւում։ Երբեմն թշնամին մի ահագին չարան կազմած՝ գնում էր դեռի հակառակ կողմով, երբեմն ցրւում էր հանդիպակաց անտառի մէջ և ձայները, մէկը միւսից վայրենի, մէկը միւսից կոպիտ, կանչում էին, հայհոյում բերդի մէջ փակւածներին, մանաւանդ Մելիք-Հաթամի կնոջը. նրանք չէին խնայում կրօնն անգամ . . . Դնտակները աջ ու ձախ թռչում էին տների վրայով, կամ զարկւում էին քարերին ու քարէ պատերին։

Իսկ բերդը լուռ էր, ոչինչ մի պատասխան չէր տալիս։ Այդ յամառ, վիթխարի բերդը, որ մի օր առաջ այնքան մարդկանց հզօր պաշտպանն էր, այժմ դարձել էր մի սարսափելի ամուր բանտ, որի մէջ փակւածների դիակները միայն կարող էին ազատւել դրսի արհաւիրքներից։ Այդ չուտ հասկացան «փախչե՛լ» կանչողները։ Եւ այդ օրը բոլորը տների մէջ փակւած էին, գլուխները կախ արած, պապանձւած։

Սանամը սիրթնել էր, այդ կարճ միջոցում փոխւել էր, ծանր հիւանդութիւնից ազատւածի էր նման։ Նա չէր համարձակւում մարդկանց երեսին նայել, անդադար լալիս էր։ Իրիկնապահին այնպէս սկսեց դողալ նոր վեր կացած մի թեթև քամուց, որ նրան հարկադրեցին անկողնում պառկել։ Խեղճին անասելի կերպով չարչարում, ծակոտում էին այն յանդիմանական խօսքերն ու անէծքները, որ դուրս էին գալիս պաշարւածների բերանից։ Ստեփանը մոռացել էր, ամենքը Սանամին էին ճանաչում։ Նա էր այդ լաց ու կոծի պատճառը, նա պիտի պատասխանէր այնքան մարդկանց։ Նա մինչև անգամ լսել էր մի քանիսից, թէ հարկաւոր է այդ «անզգամին» սպանել. նա էր, որ անամօթի պէս իր մարդու համար այդքան բան արաւ. եթէ այդքան պաշարւածները զուր տեղից պիտի փչանան, նրան, այդ կնոջը պիտի ամենից առաջ կտոր-կտոր անեն, գցեն Թարթարի ձորը, դուցէ սրանները դրանով քիչ հովանան։ Սանամը դողում էր այդ խօսքերից. նրա մաղերը փշերի պէս ցից էին կանգնում, կոկորդը հուսլ էր գալիս, խեղդում էր նրան։ Նա հեկեկալով պատմեց Ղամար-Սօլթանին մարդկանց այդ ասածները. իսկ նա բարկացած հրամայեց, որ ձայնը կտրէ և կոխեց վերմակի տակը, պինդ ծածկեց։ Տիկինը ինքն էլ վախենում էր մի այդպիսի սոսկալի վրէժխնդրութիւնից, բայց վճռել էր պաշտպանել իր սիրելի Սանամին։

Միւս առաւօտը ամեն մի ընտանիքին բաժին հասաւ մի գրիւ ալիւրից ոչ աւելի։ Իսկ ջուրը մեծ դժուարութիւնով էր ձեռք բերւում։ Թուրքերը նստել էին դեռի միւս ափին, թանձր ծառերի ետևը, և ջրագողի երևալուն էին սպասում։ Արդէն երկու տղամարդ սպանւել էին և նրանց դիակները կլանել էր Թարթարը, մեծ սուդ գցելով պաշարւածների մէջ։ Այլ ևս ճար, յոյս չէր մնում։ Պէտք էր սոված մեռնել։ Արդէն խօսում էին անձնատուր լինելու մասին . . . «Կրդնանք, ասում էին, նրանց ոտները կըհամբուրենք, թողութիւն կըխնդրենք. իսկ այստեղ լինել, տեսնել մեր երեխաների անօթութիւնը, ուտել նրանց միսը՝ չենք կարող»։

Ղամար-Սօլթանը դուրս եկաւ, ժողովեց բոլորին և ասաց որ դեռ պէտք է դիմանալ։ Նա ասում էր որ ինքը իր հարսի և միևնուճար թոռան հետ կըմնայ այնտեղ, կըմեռնէ։

—Թող իմ դիակը ագռաւներն ուտեն, ասաց նա,—առանց քահանայի, ժամ-պատարագի կըկորչեմ այս աշխարհից, բայց չեմ գնալ թուրքի ոտը։ Քիչ էլ դիմանանք, որդիք, համբերութիւն, Աստուած մեծ է, դիմանանք։

Դիմանա՛լ։ Հեշտ է ասելը։ Զրաբերդը այնպիսի տեղ չէ, որ տայ մարդկանց այնպիսի բան, որ հացի տեղ գործածէին։ Այդ ժայռերի վրայ բացի չորացած կարծր խոտից ոչինչ չէր ճարւում։ Դիմանա՛լ։ Խոտն ու քարը մարդու կերակուր չեն։

Ղամար-Սօլթանը լսեց այդ սարսափելի դառն և միանգամայն ճշմարիտ պատասխանները, և ի՞նչ կարող էր ասել, ի՞նչ յոյս կարող էր տալ։ Նա գիտէր միայն, որ հարկաւոր է դիմանալ, բայց ամբոխը չէ դիմանում. նա պահանջում է ոչ միայն ամուր տեղ, որ պահէ, պահպանէ նրա մարմինը, այլ և հաց, կերակուր, որ ամուր պատերից լաւ պիտի պահէ այդ մարմինը։

—Նրանք կարծում են թէ մենք հաց չունինք, խօսեց Ղամար-Սօլթանը,—և այդ պատճառով այնպէս պընդացրել են երեսները, ուզում են մեզ կլանեն մեր ժայռերի հետ։ Բայց մենք նրանց կըխաբենք։

Բերդի պարիսպների տակ թափւած էր բաւական կիր, որ հարկաւոր էր եղել շինութիւնները ամրացնելու համար։ Տիկնոջ հրամանով այդ կրից մի քանի ջուլ բարձրացրին բերդի գլուխը, թափեցին մի կապերտի վրայ, փռեցին և սկսեցին խախալներով այս ու այն կողմը տանել, թափել։ Բերդը պաշարողները հեռւից նայելով պիտի կարծէին, թէ այդ կիրը ալիւր է, ուրեմն և պաշարւածները դեռ շատ պաշար ունէին. այդ այդպէս լինելուց յետոյ պաշարողները պիտի յուսահատւէին ու հեռանային բերդից։ Թուրքերը տեսան, բայց ձայն տուին, հասկացրին, որ իմանում են թէ այդ ինչ խորամանկութիւն է։ Փորձը անաջող էր։ Ղամար-Սօլթանը չըգիտէր, որ եթէ հայերի մէջ կար մի այդպիսի աւանդութիւն, թէ մի ժամանակ պաշարւածները այդ կերպով խաբել են պաշարողներին, թուրքերին էլ յայտնի էր այդ աւանդութիւնը, որ մի ժամանակ այդ բերդի տակ այդպէս խաբւել են պաշարողները։

Ամբոխի համար այլ ևս մխիթարութիւն չըմնայ։ Եւ ցնցւեց, տաքացաւ ամբոխը, առանց դէս ու դէն նայելու, առանց հարց ու փորձի սկսեց հաւաքել իր իրերը։ Նա սարսափելի էր այդ բոլոր. նա, վերջապէս, կամք էր արտայայտում, մի վայրենի, անհասկանալի կամք։ Հաց,

ջուր էին կանչում ամեն կողմից և այդ բացականչութիւնները հասկացնել էին տալիս, թէ ինչ է ամբոխի կամքը.

Իրարանցումը առ ժամ դադարեց Աւրաքօլու հրամանով։ Այդ մարդը Ղամար-Սօլթանի վերջին յոյսն էր. նա կանգնեց ամենքի առաջ, երեսին խաչ հանեց և ասաց.

—Հաց ինձանից ուզեցէք։ Այս դիշեր կիջնեմ բերդից, կըգնամ, որտեղից լինի, ձեզ համար ալիւր կըբերեմ։ Դուք տեղներդ նստեցէք։

Մարդը այդպիսի ծանր ծառայութիւն էր խոստանում, բայց նրան միայն մի դիշեր ժամանակ ուրիշ։ Այդ դիշեր նա անպատճառ ալիւր պիտի հասցնէր. եթէ ոչ, դիմանալ չէր կարելի։ Այդպէս էր ամբոխի կամքը։ Ղամար-Սօլթանը զայրացած սկսեց խիստ յանդիմանել այդ մարդկանց։ Նա տաքացած էր, բարկացած անէծք էր թափում ամենքի գլխին։ Եւ ահա այդ վճռական րոպէին տիկինը նորից հասկացաւ, որ ժամանակը փոխուել է, աշխարհը փչացել։ Ո՞վ էր տեսել, որ այդ հասարակ գիւղականները, այդ «ռահաթները» համարձակուէին ընդդիմանալ Մելիք-Հաթամի կնոջը։ Բայց այժմ ընդդիմանում էին։ Այժմ ամենքը ճակատները պնդացրած նրա երեսին էին նայում և նրա յանդիմանութիւններին, նզովքներին պատասխանում էին.

—Քո փեսան է պատճառը. . . Դու քանդեցիր մեր տները։

Առում էին և լաց լինում։ Չէր հասկացուում, թէ ինչ միտք ունի այդ լացը, ում վրայ է թափուում. բայց այնքան անդուսպ, սրտաճմլիկ լաց էր, որ տիկինը լռեց և արտասուքը աչքերին մտաւ տուն, ուր Սանամն ու Գիւլ-Չհանը նոյնպէս լաց էին լինում։ Իսկ Աւրաքօլին խոստացաւ այդ դիշեր ալիւր հասցնել։

Եւ երբ դիշերը եկաւ, այդ անվախ մարդը թողեց բերդի դռների մօտ իր ունեցած պաշտօնը, ուղևորուեց դէպի հիւսիսային կողմը և այդտեղ սեպացած ժայռերից կախ ընկաւ, սկսեց ցած իջնել չանների օգնութեամբ։ Նա կախ էր ընկնում սարսափելի վիհերի վրայ, չօշափելով գտնում էր նեղ նեղ խառոչներ, որոնց միջով անցնում էր, կորչում խաւարի մէջ։

Ղ. Ը. Օ

Կրշարունակի

ՄՐՑՈՒՄՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Վէպ տիկին Դոպրէս-Լէֆլէրի

(Շարունակութիւն)

Զընայելով իր կատակներին, Բէրնսօնը այդ օրից սկսած հեզութեամբ լսում էր Արլայի նկատողութիւնները։ Հէնց որ մի որ և է թիւրիմացութիւն էր ծագում, Արլային էին ուղարկում նրա մօտ բացատրութիւն տալու։ Նա միշտ սկզբում տաք տաք վիճաբանում էր, բայց վերջ ի վերջոյ հնազանդուում էր Արլայի կամքին։ Շուտով նա սովորեց Արլային զիջանել ամեն բանում և մինչև անգամ երբեմն էլ պատմել նրան այն անզգուշութիւնները, որ նա անում էր Արլայի բացակայութեան ժամանակ և կամաց կամաց նրանց մէջ սկսեցին սրտագին բարեկամական յարաբերութիւնները, որ երկուսի համար իր առանձին հոգեկան բարձր զուարճութիւնն ունէր։

Դրա հակառակ Գուբլին և կանդիտատը ուղղակի բաց պատերազմում էին միմեանց դէմ։ Գուբլին Բէրնսօնի համար նազանիկ, դատարկ էր, թէև մի և նոյն ժամանակ նրա գեղեցկութիւնը և նրա արտաքին փայլը շլացնում էին նրան։ Բէրնսօնը երբէք չէր լսանում, թէ նրա հետ ինչ խօսէ և նրա ներկայութիւնով իր շլոթութիւնը ծածկելու համար յայտնի ցոյց էր տալիս նրան իր կատարեալ անտարբերութիւնը և խուսափում էր նրա ընկերութիւնից։ Գուբլին էլ վրէժ էր հանում նրանից, օգուտ քաղելով ամեն մի յարմար դէպքից, ստորացնում էր Բէրնսօնին ուրիշների առաջ նրան ծիծաղելի դրութեան մէջ ձգելով. օրինակ՝ նրան մանը յանձնարարութիւններ էր անում, որոնց Բէրնսօնը չէր կարողանում կատարել իր կարճատեսութեան պատճառով, կամ թէ չէ այնպիսի խաղեր էր սարքում, որի մէջ Բէրնսօնին ամենայնմբ դերն էր ընկնում. օրինակ Գուբլին հարկադրում էր նրան հանելուկներ վճռել կամ թէ գրել այսպէս ասած bouts rimés, անմիտ խօսքեր։

Ամարանոցում մի շատ հեւրեր էին լինում, մանաւանդ երիտասարդներ, որոնց մէջ կամայ ակամայ պէտք է գտնուէր Բէրնսօնը։

Արլան նստած էր սրահում, իր սիրած անկիւնում. երեխայքը նրանից մօտիկ խաղում էին։ Նագվօրնի սովեանիկը տանը չէր, գնացել էր քաղաք։ Բէրնսօնն անցնում էր ճանապարհով մի ձեռին մեծ վայտ, միւս ձեռին պայիսակ մէջի գրքերով։ Նա բռնել էր լեռների ճանապարհը. նա սիրում էր էկսօրից յետոյ պառկել իր սիրած տեղը կաղարթախիտ հին կաղնու տակ։ Նկատելով որ Արլան միայնակ է նստած սրահում, նա կանգ առաւ, յետոյ արագ շուռ եկաւ և քայլերն ուղղեց դէպի նրա կողմը։

Այսքան հագիւ էր յաջողուում նրան առանձին պատահել Արլայի հետ և խօսել մեն մենակ ու երկար։ Նա մինչև անգամ դիտմամբ մի քանի սխալ բաներ արաւ, որ առիթ ունենայ Արլայի հետ բացատրութիւն ունենալու։

—Բարև, ասաց նա կանգնելով պատշգամբի առաջ. մի ձեռքում նա բռնել էր իր գլխարկը, իսկ միւսով սրբում էր իր մազերը։ Այդ միջոցին նրա դէմքը շատ նմանում էր դարձեալ աշակերտի դէմքի, այնպէս որ Արլան ծիծաղը պահելու համար իր շրթունքը խածեց։

—Այ, խօսեց Արլան, աշխատելով լուրջ լինել. ես ձեզանից իմ յոյս բոլորովին կորել եմ։ Ճշմարտան ասած, ես արդէն սկսել եմ համոզուել. որ ձեզ այլ ևս բոլորովին չարժէ կրթուել։

—Ի՞նչ անճոռնի կարծիքներ ունիք, գոչեց նա։ Լաւ, այսուհետև հէնց որ երեխայքն ինձ անհնազանդ լինին, ես նրանց կասեմ. «շարունակեցէք, շարունակեցէք, սիրելիք,—ես այսուհետև չեմ աշխատելու ուղղել ձեզ»։

—Բայց խոստովանեցէք, որ դուք ամենքին կարող էք համբերութիւնից հանել, ասաց Արլան։ Ի՞նչպէս կարելի է այդպիսի բան ասել երկու ջահել օրիորդների։

—Այդպիսի բան. ինչ է, ես միայն ասել եմ, որ սէրն առանց պտակի այնքան չէ ստորացնում կնոջը, որքան ամուսնութիւնն առանց սիրոյ։ Աւելի շատ ես կարուունք ունիմ նախատել ձեզ և անբարոյական անուանել, եթէ դուք իմ ասածի հակառակը պնդէք։

—Ես երբէք այդպէս չեմ պնդում, ասաց Արլան կռանալով իր ձեռագործի վրայ, բայց այնպէս, որ նրա դէմքը երևում էր գլխարկի ծայրերի տակով։

Jerusalem

—Ապա, ի հարկէ . . . Լաւ, ուրեմն դուք ինչ էլք ուզում հասկացնել, ասելով թէ սէրն աւելի քիչ նշանակութիւն ունի, քան պարտաճանաչութեան զգացմունքը, յարգանքը, վստահութիւնը և ուրիշ այսպիսի ծռոտ պռոտ բաներ։ Դուք անբարոյականացնում էք ձեր քոյրերին այդպիսի կարծիքներ յայտնելով։

—Ցեռոյ . . .

—Ձեմ համարձակւում շարունակել։

—Շատ էլ լաւ էք անում։ Երևի դուք ուզում էլք ասել մի բան, որ . . .

—Որի մասին ինձ աւելի լաւ է լռել,—այո, դուք իրաւունք ունիք. բայց ասացէք խնդրեմ, ինչպէս էք դուք կարողանում այսպիսի մի հրաշալի ամառը ամեն օր նրստած անցկացնել։ Ձեր մէջ մինչև անգամ սիրոյ հետաքրքրութիւնը չէ երևում դէպի բնութիւնը։ Մի՞թէ երբէք ձեր մէջ ցանկութիւն չէ ծագում դնալ անտառը. մի՞թէ երբէք դուք չէք ցանկանում թափառել անտառում, այնտեղ ծաղիկները քաղել, քսել ձեր շրթերը անտառի թուփերին, պառկել մէջքի վրայ խոտի մէջ, բոլոր կրծքով շնչել անտառային օդը։

—Իսկ եմ զաւակներս,—ուրեմն ես նրանց պէտք է թողնեմ բոլորի կամքին. մինչդեռ ինքս թափառելու եմ անտառում։

—Ձեր զաւակները . . . Ճշմարիտ, նրանց համար միայն օգտակար կըլինէր, եթէ դուք նրանց մի քիչ աւելի ազատութիւն տայիք և նրանց թոյլ տայիք մի քիչ ազատ վազվզել։ Հաւատացնում եմ ձեզ, ես շատ վրդովւում եմ, երբ մտածում եմ թէ դուք ինչպէս էք չարչարում ձեր երեխաներին։

—Ե՞ս, չարչարո՞ւմ եմ . . .

—Այո, չարչարում էք։ Փոխանակ թողնելու որ նրանք աՀեն արեգակի ջերմութեան և անձրևի զովութեան տակ ազատութիւն վայելեն, դուք այնպէս էք կրթում, որ կարծէք թէ նրանք ձեր ձեռում ջերմանոցի երկու հատ քնքուշ բոյսեր լինեն, որոնցով պէտք է զարդարուին ձեր պատուհան սալօնները։ Ճշմարիտ, անտանելի է նայել այնպիսի երեխաների վրայ, որոնք այնքան բարեկիրթ են, որ մինչև անգամ անկարող են չարութիւն անել։ Օրինակ ձեր փոքրիկ Էմիլը այնքան քնքշացած և լացկոտ է, որ ես մի անգամ նրան պատահեցի քարի վրայ նստած դառնապէս լալիս. նա գանգատւում էր, որ Ճանապարհը կորցրել է և չէ կարողանում յետ դառնալ մայրիկի մօտ. նա գանւում էր ոչ այնքան հեռու, լեռան վրայ, ընդ ամենը քսան քայլ հեռու տնից։ Իսկ Եղիսաբէթը կատարեալ փոքրիկ կեղծաւոր փարիսեցուհի է. նա պատրաստ է իր կուրծքը ծեծելով շնորհակալութիւն յայտնել Աստծուն նրա համար, որ ինքը նման չէ քաղաքի երեխաներին, որոնք անցեալ օր նրա աչքի առաջ կռռւում էին փողոցում։ Պէտք էր տեսնել նրա դէմքն ու դիրքը երբ նա ասում էր. „Ի՞նչ զզուելի բան է կռուելը“. Իսկ երբ ես նրան նկատեցի (դուք ինձ էլի կըհայհոյէք), թէ «այդ ամենևին զզուելի չէ, որ առանց դրան չի լինել», նա ինձ իր նայուածքով ոտից մինչև գլուխս չափեց վիրաւորուած զգացմունքի արտայայտութիւնով, Էմիլի ձեռից բռնեց ու հեռացաւ ասելով. «Արի, Էմիլ, կանդնատաք յիմարութիւններ է խօսում. միայն վատ երեխաներն են կռուում»։ Այո, կեղծաւորութիւնը, որ դուք արտայայտում էք խօսքերով և կեանքի մէջ . . . դա... կեղծաւորութիւն է . . .

—Դուք ուրեմն կեղծաւորութիւն էք անուանում պարտք կատարելը։

—Պարտք. սխալ էք անուանում դուք. ամենևին դրա մէջ չէ մարդու պարտքը։ Ձեր պարտքն է, որ միշտ ինքներդ ձեզ հաւատարիմ լինիք, միշտ ձեր ներքին խըղճի, բնութեան ցուցմունքներին հետևէք . . . բայց մի՞թէ դուք ձեռներդ խղճիդ վրայ դրած կարող էլք ասել, որ դուք բնութիւնից հէնց այդպէս կեղծուլատեր և փակուած էք. այսինքն կուզէի ասել սահմանափակ էք, եթէ միայն խօսակցութեան մէջ ուրիշ նշանակութիւն չէք տալ այդ բառին։ Անկեղծօրէն ասեմ ձեզ, ես շատ հիմունքներ ունիմ մտածելու և կարծելու, որ ձեր կեանքն սկզբից մինչև վերջը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի շարք կեղծաւորութիւն։

—Այո՞. ինչ քաղաքավարի էք, Ճշմարիտ։ Բայց լաւ, ինչ ապացոյցներ ունիք ձեր խօսքերին։

—Ահա թէ ինչ.—Նախ և առաջ և ամենից առաջ ձեր աչքերը։ Ի հարկէ սա թոյլ ապացոյց է, որովհետև դուք ամենքդ այնպիսի աչքեր ունիք, որ չէ համապատասխանում ձեր ներքին բովանդակութեան. գոնէ ձեր քոյրերինն այդպէս է . . . Բայց ձերը . . . ես երբէք չեմ կարող հաւատալ, որ ձեր աչքերը մինչև ստին, երկրորդ, դուք ինչ էք անում կէսօրից յետոյ ժամը 6-ին, երբ դուք երկու ժամով անհետանում էք.—ահա թէ ես ինչ կուզէի իմանալ։

—Ճշմարիտ, որ դուք ծիծաղելի էք, ես արդէն ձեզ ասել եմ, որ սունկ եմ հաւաքում։

—Ցեռոյ, այդ սունկերը դուք Ճանապարհին ուտո՞ւմ էք. ինչո՞ւ երբէք տուն ոչինչ չէք բերում։

—Ես քիչ եմ բերում, որովհետև անտառում քիչ է բուսնում . . . բայց նրանք շատ համեղ են։

—Այ, տեսնո՞ւմ էք ինչպէս կեղծաւորում էք. դուք երևակայում էք թէ սունկ ժողովելը մի յարգելի զբաղմունք է, այդ պատճառով էլ այնպէս էք ցոյց տալիս, երբ թէ գնում էք սունկ հաւաքելու, մինչդեռ ես հաստատ գիտեմ, որ դուք այդ մի՞ջոցին միայն մտորում էք, երևակայում։

Արլան կարմրեց. կարծես թէ նրան գողութեան մէջ բռնեցին։ Ճիշտ որ նրա այդ սունկի եռեւից գնալու զբօսանքի ժամերը խիստ էս նրա կեանքի ամենալաւ ժամերն էին և նա վերջի ժամանակները աւելի յաճախ էր գնում զբօսնելու։

(Շարունակի։)

---

*
* *

Նա աղքատ էր . . . Նա անծանօթ եկուր
Հեռաւոր երկրի օտար ափերից,
Սոսկ մի հայրենիք, նրա քաղցն ահաւոր
Տեղ էր բաժին իր ժլատ ծոցից . . .

—

Անցան տարիներ . . . եւ անդաւաճան
Իր վսեմ զործին զոհեց սիրտ, հասակ,
Եւ այս է նրա անշուք գերեզման—
Այստեղ հանգչում են մոքեր եւ տանջանք...

Եր. Պալեան

Խմբագրութեան կողմից

Մեր բաժանորդներից ոմանք դանդաղում են համարները կանոնաւոր չստանալու համար։ Հարկաւոր ենք համարում յայտնել որ բոլոր բաժանորդներին՝ առանց բացառութեան ուղարկւում են Տարազի համարները Թիֆլիսում կիրակէ օրը մինչև ժամը 11-ը. իսկ դաւառների համար—երկուշաբթի օրը բոլոր համարները յանձնւում են փոստային. ուրեմն համարները չստացող բաժանորդները նախ պէտք է դիմեն փոստային և ապա խմբագրութեան։

ժամանակագրութիւն

Էջմիածնից մեզ հեռագրում են. „Վեհափառ Մակար Կաթողիկոսը ծանր հիւանդ է“։

—

Մա բա ամսի սկզբներում, ինչպէս հաղորդում է «Т. Л.», Կովկասեան Կառավարչապետ գեներալ Շերեմետեւի Պետերբուրգից վերադառնալուց յետոյ Թիֆլիսում կըկայանայ արտաքոյ կարգի խորհուրդ Կովկասեան նահանգապետների խորհրդակցութեամբ

—

Երևանի մէջ 1887 թուականին տեղի ունեցած անկարգութիւնների գործի քննութիւնը նշանակւած է Դատավարական Պալատում փետրուարի 12-ին։

—

Ղարաբաղու դպրոցապատկան կալւածների գործի քննութիւնը վերջացաւ դատաստանական պալատում յունուարի 26-ին. վճիռը յետաձգւած է և մենք կըյայտնենք իր ժամանակին։

—

Այժմ Թիֆլիսումն է գտնւում պետական կալւածների գլխաւոր հաւատարմատարի օգնական նադվորնից սովետնիկ Լիսենկո, որ պաշտօնապէս ուղարկւած է վերադարձնելու, թէ ինչպէս են պաշտպանւում Կովկասում պետական կալւածների շահերը։

—

Թիֆլիսի քաղաքագլուխ պ. Ա. Մատինեան,—ինչպէս հաղորդում է պաշտօնական «Кавказъ» լրագիրը—մըտադիր է հրաժարւել իր պաշտօնից։

—

Թուրքայ պաշտօնական լրագրերը հաղորդում են, որ սրբազան Խրիմեան Հայրիկն արդէն Երուսաղէմումն է Ս. Յակոբայ վանքում։ Նոյն թերթերն աւելացնում են, որ Սուլթանը «ի նշան այն բարձր համակրանաց, զոր կ'տածէ առ Խրիմեան սրբազան, բարեհաճած է 10,000 դրուշի (780 ռուբլի ռուս. փողով) դրամական պարգև շնորհել, որպէս զի Նորին Ամենապատուութիւն կարենայ համբորդել ամենայն հանդստաւէտութեամբ»։

—

1889 թուականից սկսած, խօսում են նոր ծրագրի մասին, որ պէտք է կազմւէր հայոց հոգևոր դպրանոցների մասին. այժմ ինչպէս հաղորդում են մեզ Էջմիածնից, այդ ծրագիրն արդէն կազմւած է։

Մարդիկ ունեցածները գնահատում են միայն կորչելուց յետոյ։ Ո՞վ չը դիտէ թէ ինչպէս անխնայաբար են կարտում մեզանում անտառները։ Նայեցէք Թիֆլիսի շրջակայքին, սափրած գլխի է նմանում։ Մի քանի տարի է, որ պաշտօնական շրջաններում արդէն խնդիր է բարձրացած Թիֆլիսի շրջակաների վրայ նոր անտառ ձգելու, (որքան մեզ յայտնի է, խնդիրը բարձրացրել է Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը), այդ խնդիրն ինչպէս երևում է, մտահոգում է իրազործելուն։ Վերջերս արդէն կազմւած է մասնաժողով, որ փընտրում է Թիֆլիսի շրջակայքում աղբիւրներ, որոնցով կարելի լինէր ոռոգել նոր ձգելիք անտառները։

—

Զմիռնիա (Իզմիր)

դեղարուեստ

Թատրոն

Հինգշաբթի, յունուարի 31-ին, Բանկային թատրոնում հայ դերասանական խումբը մասնակցութեամբ տ. Սաթինիկ Զմչկեանի ներկայացրեց պ. Գ. Զմչկեանի «Վարժուհի» կոմեդիան և «Զարուշը դեպատ գնդանին» թարգ. վոդէվիլը։ Թատրոնը համարեա թէ լիքն էր, բացի օթեակներից։ Ներկայ էր հայ ամբոխը. այս անգամ քաղաքիս հայ վարժուհիներն էլ եկել էին տեսնելու, թէ ինչպէս «Վարժուհի Նունէն» պիրել գիտէ և իր սէրը զսհել (?)։ Հանդիսականներից մի խումբ օրիորդներ, տիկիններ և պարոններ ներկայացման ժամանակ շարունակ ծիծաղ ուրքրքիչ էին բարձրացրել պարակ-

բում։ Արդեօք այդ անձինք ինչ էին ուզում ասել իրանց այդ անվայել և մի միայն ազգանեերին յատուկ ցոյցերով։

Փետրուար 6-ին, յաւաջիկայ չորեքշաբթի, Թիֆլիզի թատրոնում, յօգուտ հիւանդ դերասան Ադամեանի, Օպերայի խումբը կըտայ «Հրէուհի» օպերան։ Երաժշ. Հալէվի։

Լիբրետօն տպուած է հայերէն ևս։

Երաժշտութիւն

Անցեալ կիրակի երեկոյեան Կրուժոկում տիկին Ե. Ա. Դանչարովի նախաձեռնութեամբ յօգուտ յանցաւորների որդոց ապաստանարանի կայացաւ երաժշտական երեկոյթ։ Կրուժոկի դահլիճները լիքն էին Թիֆլիսի ամենաընտիր հասարակութեամբ։ Երեկոյթը շատ աշխոյժ անցաւ։ Գեղեցիկ էր մանաւանդ երաժշտական մասում յիսուն հոգուց բաղկացած համերգը, որին մասնակցում էին Թիֆլիսի ընտիր ընտանիքներից ռուս, վրացի, հայ տիկիններ, օրիորդներ և պարոններ։ Պարերը շարունակուեց համարեա մինչեւ առաւօտ։

—Երեքշաբթի ամսոյս 5-ին Բանկի թատրոնում պ. Ամիրջանեանի կօնցերտն է մասնակցութեամբ տ. Ունտիլովայի, տ. Փերդիսի, պ. պ. Սարաջևի, Պետրոսեանի և ուրիշների։

ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Այս օրերս տեսանք Կ. պոլսեցի Վրոյը լուսանկարչի (դերասան Լաս) մի քանի լուսանկարները, որոնք առնուած են Անկի և Հայաստանի այլ աւերակների տեսարաններից, նաև Ս. Էջմիածինը և նրա լիճն ու անտառը։ Այդ պատկերները շատ յաջողուած են և կարող են լաւ զարդ լինել ամէն մի հիւրասենեակի։ Աւելի յաջողուած լուսանկարներն են Ս. Էջմիածինը, լիճը և անտառը, Անկի ձորը, Մայրեկեղեցին և Անկի մի քանի տեսարանները։ Յանկալի էր դրանց ստերեոսկոպի համար նկարուածներն ունենալ։ Այդ լուսանկարները հանուած են մեծ դիրքով և բոլորովին էժան գնահատուած։

Թղթակցութիւն

Բաթում 26 յունուարի 1891 թ.

Սարտափների ապատորդութեան տակ եմ գրում ձեզ այս նամակը. ամբողջ Բաթումը ցնցուած է յանկարծահաս դիժբախտութիւնով։ Առաւօտեան ժամն ութին կայծակի արագութեամբ դուռ տարածուեց քաղաքում թէ մշակներ են խեղդուել ծովում։ Մի քանի դրսէի ըսել ապրում ծովափը ու նաւահանգիստը լցուեց ժողովրդով, մարդ, կին, երեխայ։ Մենքը վազում էին ստուգելու այդ դիժբախտութեան դուռը։ Ես չեմ կարող նկարագրել այն տխրալի շփոթութիւնը, որ տիրում էր թէ ծովափում եւ թէ ծովի վրայ նաւակների մէջ։ Այստեղ նաւակը սլանում էր մէկի հետևից, որն արդեն մեռած, միւսին տրորում էին յետ քաշելու։ Սարսափելի էր, սարսափելի, ո՛չ. ես չեմ նկարագրի։ Փաստն այս է.—Վաղ առաւօտեան 30 մշակներ նաւի են բարձել մի նաւակի Բօշիդի գործարանից, որ տանեն հեռացնեն մեծ նաւին։ Ծովի վրայ նաւակը կայնել է մի մեծ նաւի եւ ընկղմելով ջրի մէջ իր հետ տանելով թէ նաւը եւ թէ մշակներին։ Նաւատորմիների եւ ուրիշ մշակների ջանքերով ազատուեցան միայն 20 հոգի մշակներից, իսկ մնացածները խեղդուեցին։

Մոմուլի տեսութիւն

Ձեզ պատահել է ժամերով թերթել մայրաքաղաքի օրաթերթերը և շաբաթաթերթերը, նոյն իսկ ամսագրերը։ Նայում էք առաջնորդողները, անցնում էք ներքին տեսութեան, անհամբերութիւնից դրգռուած ուզում էք մի միտք գտնել ֆելիէտօնի մէջ, կէսը չանցած դէն էք ձգում, միւսը վերցնում—ոչինչ, ոչինչ և ոչինչ. տպագրած թերթեր, չոր, կոչտ, անկապ, ոչինչ նոր, ոչինչ ոգեթռիչ։ «Ապրել ենք ուզում», երեւում է ամեն մի տողի մէջ. «մեր կաշին թանգ է մեզ համար», պլսպլզում է տողերի տակից. ընթերցողը կարծես թէ անապատի մէջ է զգում իրան, ուր ահագին տարածութիւն անցնելով մի՛ օվազիս չէ գտնում, ուր մի կաթիլ զովաբար ջուր խմէ ույագեցնէ իր ծարաւութիւնը։ Վերջին թղթատարով բերած մի քանի փուք ծանրութեամբ տպած թերթերը քըրքրելով մենք կարողացանք միայն կանգ առնել «Заря» շաբաթաթերթի վրայ, որի խմբագրութեան մէջ երեւում է որ դեռ չէ մեռած զգացմունք դէպի իդէալ, դէպի գաղափար, դէպի ճշմարտութիւն։ Այդ յարգելի շաբաթաթերթի № 1-ի առաջնորդողից բղխում է մեր օրերում օտարոտի համարուող մի անկեղծութիւն, եռանդ ու անկեղծ սէր դէպի տպագրական օրը և անվհեր ոգի ճշմարտութիւնը պաշտպանելու համար։ Դուցէ այդ չ՝ յաջողի նրան, բայց հօ ասում է [illegible], գոնէ մխիթարում և քաջալերում է ընթերցողին։ Տարագի ծա[illegible] մեզ չէ ներում ամբողջովին բերելու այդ հիանալի յօդուածը, բայց չենք կարող լուութեամբ անցնել նրա մի քանի կտորները։

« . . . Մամուլը Ռուսաստանում զբաղնում է մի բացառիկ դրութեան մէջ. նա կենդանի խօսքի միակ ամբիոնն է, հասարակական եւ ժողովրդական պահանջների միակ արտայայտիչն է. ուստի նա չըպէտք է ենթարկի ընդհանուր հոսանքներին, այլ պէտք է գնայ նրանց առջեւից, պէտք է սովորեցնէ, միեւնոյն ժամանակ պէտք է անընդհատ կռիւ վարէ արմատացած տգիտութեան դէմ, որ վակում է նրա առաջ ճանապարհը դէպի ճշմարտութիւն»։

Շաբաթաթերթը անկեղծ ցաւ է յայտնում, որ մամուլի ճանապարհին փուչ են ցանում նոյն իսկ իրանք մամուլի ներկայացուցիչներից ոմանք, որոնք միայն մտածում են իրանց ջէրը հարստացնելու և որոնց համար «ճշմարտութեան ծառայելը» միայն «դատարկ խօսք է»։

«Կեանքում ճշմարտութեան դիմելը ընդհանուր է բոլոր մարդկութեան—ասում է յարգելի շաբաթաթերթը։ Ճշմարտութեան, բարոյ եւ գեղեցկի զաղափարները հայրենիք չունեն։ Բայց մարդկութեան ամեն մի առանձին ընտանիք, իր առանձին, իրան յատուկ ճանապարհով դիմում է դէպի այդ գաղափարների իրագործումն»։ . . . Մի ճակատագրային թիւրիմացութեան շնորհիւ տպագրական խօսքի մենաւաճառութիւնն ընկել է փողոցային հրատարակիչների ձեռքը։ Ինչեցէք այդ մենաւաճառութիւնը եւ տարակոյս չկայ որ մամուլի մէջ երեւացող փողոցային կեղտը կանհետանայ՝ յետ մղելով ամենիւ խօսքից»։

Շաբաթաթերթն իրաւացի պընդում է որ ոչ թէ ազատամիտ թերթերը են տէրութեան հակառակորդները, այլ ժողովրդին և տէրութեան շողոքորթող մամուլի մենաւաճառները։

Տէրութեան նպատակն է մարդկային իրաւունքները պաշտպանել, հնար եղածին չափ ապահովել իւրաքանչիւր քաղաքացի անհատի բախտը. նոյնն է մամուլի նպատակը, որ ծառայում է ճշմարտութեան“։

„Հանդարտ, բայց ոչ լուռ, առանց դադարելու կատարում է իր գործը մարդկային ոգու եւ մարդկային կեանքի զարգացման պատմութիւնը։ Խստութեան, ստի եւ լպրշութեան օրգիայի մէջ, տգիտութեան խաւարի տակ, հասարակական ոգու խորքում, թափում են աշխարհի համար անտեսանելի արտասուքներ, գործում է միտքը եւ կատարում է վերածնութեան մեծ գործը“։

E pur si muove

(Գալիլէի խօսքերն են.—այնուամենայնիւ շարժւում է (երկիրը)։

Եւ ահա մի կաթիլ ջուր անապատի մէջ։

—

ՏԱՐԱԶ

ՇԱՇԱԿ

Ամենանուրբ բանն է աշխարհիս վրայ Ճաշակը և եթէ չասենք միշտ, գոնէ շատ դէպքերում կարելի է մարդկանց քաղաքակրթութեան աստիճանը որոշել նրանց Ճաշակի հրբութեան աստիճանով։ Ընդունուած է ասել. «Այս ինչը Ճաշակ ունի, նուրբ Ճաշակ ունի, այն ինչը Ճաշակ չունի» և այլն։ Իսկապէս ասել՝ մարդ չըկայ աշխարհիս երեսին, որ Ճաշակ չունենայ. իւրաքանչիւր մարդ իր քաղաքակրթութեան աստիճանի համեմատ ունի իր Ճաշակը. բայց քաղաքակրթեալ մարդը Ճաշակ չէ համարում այն, ինչ որ աչքի, երևակայութեան և ջղերի վրայ խաղաղացնող և դուրեկան արտաւորութիւն չէ թողնում։ Այդ արտաւորութիւնն էլ շատ բազմատեսակ է և ոչ մի վորձուած գեղագէտ չէ կարող որոշակի ասել, թէ ինչպէս պէտք է հագնի կինը կամ օրիորդը կամ նոյն իսկ տղամարդը՝ ուրիշի վրայ լաւ տպաւորութիւն անելու համար։ Զգեստ միշտ կարելի է ընտրել որքան ուզում էք՝ թանգագին, գեղեցիկ, ամենաընտիր կտորներից. հաստ մէջքը միշտ կարելի է բարակացնել կօրսէտով. մՃՃուած մարդերը միշտ կարելի է սանրել սանրով և օծել լուղով, կարՃ հասակը կարելի է երկարացնել երկար կրունկներով կօշիկ հագնելով և կօշիկի մէջ էլ կրունկներ դնելով. բայց աշխարհիս սկզբից մինչև այսօր ոչ մի բժիշկ, ոչ մի բնագէտ դեռ չեն գտել և երբէք չեն էլ գտնի մի այնպիսի կաշի, որ կոպիտ մարդը հագնելով իր մարմնի վրայ, կարողանար յանկարծ վոխուել ու քնքշանալ։ Ոչ մի դերձակ, ոչ մի մօդիստ չի կարող հնարել այնպիսի զգեստ, որ կինոջ կամ օրիորդի երանքին տայ շնորհ, գրացիա, որ նրա աչքերին տայ սքրութիւն, վայլ և ելէքտրականութիւն։ Դեռ ևս չի ծնուել ու չի էլ ծնուի այն կօշիկարը, որ իր կարած կօշիկներով օրիորդների, տիկնանց և տղամարդկանց քայլերին տայ համարձակութիւն, անյոգնողութիւն։ Ո՞ր վարսաւէրը կամ սանրիչը երաշխաւորը կըլինի որ իր սանրած կամ անուշահոտ լուղերով օծած գլխի մէջ մի մսխալ խելք աւելացաւ։ Իսկ զգեստի սազելն ու չըսազելը ահագին կապ ունի հագնողի դէմքի արտայայտութեան, նայուածքի, քայլերի և ուրիշ բոլոր շարժուածքների հետ։ Կարող է պատահել որ թանգագին զգեստներով զարդարուած տիկինը կամ օրիորդը 16 կոՃակներով ձեռնոցներ հագին, պարահանդէսի դահլիՃում նընջէ, սարսափելի կերպով որոշուայ և մուռանալով իր գրպանի անուշահոտ թաշկինակը յանկարծ երկու մատով սրբէ իր քիթը. կարող է պատահել, որ ամենանոր վարիզեան ՃԼի նեղ կօշիկներ հագնող օրիորդը ամբողջ երեկոյթի ժամանակ երան զգայ շղթայուած, մնայ նստած մի աթոռի վրայ, չըկարողանայ մի քայլ անգամ անել և դէմքը այնպիսի կոմիկական արտայայտութիւն ունենայ, որի վրայ գրած լինի. «կօշիկս սեղմում է»։ Կարող է մի օրիորդ կամ տիկին իր կրծքի վրայ կրել բրիլիանտներով զարդարուած ժամացոյց ու շղթայ և երբ ասէք ժամը 25-ն է՝ հաւատայ։

1. Ասղնագործ բարձի երես։

Շորը կարելի է ՃԼել, բայց դերձակը չէ կարող մարդ ՃԼել։ Մօդիստական—կը ու ՃԼ անող կինը կարող է պատուէրի համեմատ անգլիական կամ ֆրանսիական զգեստ ՃԼել փարիզու վերջին մօդայով, բայց նա երբէք չէ կարող հաստատել, որ այդ զգեստը ոչ-ֆրանսուհուն այնպէս կըսազէ, ինչպէս որ սազում է ֆրանսուհուն։

Ո՞վ չէ պատահել ոչ միայն գաւառներում, այլ նոյն իսկ մեր բնակած Թիֆլիսում մեծաքսով ու կերպասով պՃնուած զարդարուած տիկիններին, որոնց դէմքի արտայայտութիւնը, քայլուածքը և շարժուածքը ամենևին չէ համապատասխանում նրանց վրայի հագուստին։ Ճաշակով տղամարդը, գեղեցիկին սիրահար տղամարդը միայն ծիծաղելու համար կընայի այդպիսի պՃնած հնդկահաւերին և ծիծաղին անմիջապէս կըհեռանի զզուանքի զգացումը։ Այդ այնքան բնական է, որ ապացոյցի կարիք չունի։

Նոյն բանը Ճիշտ է և տղամարդի համար։ Ամենավերջին մօդայով հագնուած մարդու մէջ միշտ կարելի է Ճանաչել դերձակի համալսարանում ուսումն աւարտած ագէտին. ֆրանսիական կոստիումների մէջ միշտ կարելի է Ճանաչել ՕրթաՃալում ծալապատիկ քէֆ անող Գիգոներին, Արտոներին և Նիկիանոներին։ Թատրոնի առաջին շարքում միշտ կարելի է Ճանաչել այդ գինեներում ու գինետներում արդանով կինտաուրի պես եկող հաւլաբարցի, Թումբուլցի, զարաբաղցի և այլն ֆրանսիացիներին։

«Զգեստին նայում են ընդունում, խելքին նայում են՝ Ճանաչարկ Ճգում», ասում է առակը և շատ Ճիշտ է. կեանքի մէջ մենք տեսնում ենք, որ այդ այդպէս է։

Կարծում ենք, որ ընթերցողը հասկացաւ մեր միտքը, թէ Ճաշակը, մանաւանդ գեղեցիկ Ճաշակը արտա-

2. Ուսերի ծածկոց։

—Ո՞ր է կնոջ կամ ամենայարմար զգեստը, կը հարցնեն մեզ։

—Այն, որ ինքը կինը կամ օրիորդը կարում է իր ձեռքով, իր համար։

—Ո՞ր է երեխաների ամենագեղեցիկ և ամենայարմար զգեստը։

—Այն, որ մայրը կարում է իր զաւակների համար։

Ո՞ր մայրը չէ ցանկանում, որ իր զաւակները գեղեցիկ լինին, լաւ հագնուած լինին, դուք գան ուրիշներին և ով կարող է աւելի լաւ հագցնել իր զաւակներին, քան մայրը։

Լաւ նկատեցէք թատրոնում հագուստներին աւելի այն կանանց, որոնց դուք ճանաչում էք։ Անգամ տեսնում էք դուք պարտերում աթոռների վրայ նստած մի կին կամ օրիորդ ամենահասարակ կտորից շուէյ դէրևայով. տեսէք ինչպէս գեղեցիկ նստում է նրա վրայ զգեստը, ինչ հիանալի համաչափութիւն կայ։ Նա կարողանում է ազատ շարժել իր գլուխը, իրանքն ու թեւը. այդ շալի կտորի վրայ նա ունի մի մետաքսի բանտ, ինչ գնորհքով, ինչ գեղեցիկ կապած է այդ բանտը. գիտէք գա իր ձեռքովն է շինած։ Տեսնում էք, հասարակ բրդէ կամ կիսաբամբակ թելից գործած շալը ինչպէս շնորհալի կերպով ընկնում է նրա ուսերի վրայ, քիչ անկոխտ, ինչպէս ասում են նիգլիժէ. նրա զգեստն իր դէմքի հետ կազմում է կատարեալ ներդաշնակութիւն։ Նայում էք նրա կողքին Տօլլէի մագազինում ձեռած շոր մի կաղապարի վրայ, վրան էլ լիքը ոսկի, արծաթ ու ադամանդներ, որքան ուզում էք նայեցէք, չէք գտնի այն կայծը, ինչ որ գտաք բրդէ շալի դերևայի մէջ։ Իսկ եթէ բրդէ շալի դերևայ հագնող մնտելլիգենտ կինը կարում է իր համար թանգագին կտորից զգեստ այն ժամանակ տեսէք թէ շնորհն ու գրացիան որտեղ է։

Բաւականանալով այս անգամ այս չափով հաշուին սասին, ամփոփենք մեր խօսքերը նրանով, որ մեզ համար ցանկալի է, որ հայ կինը և օրիորդը չընաբէ իրան սնոտի յոյսով կարծելով, որ մօդեստայլ դրած շորը նրան կը-

3. Բաց լիֆ մետաղի մարուկով։

քին բան չէ, այլ կախուած է մարդու ներքին զգացմունքներից, նրա ներքին հոգեկան աշխարհից, որքան մարդս աւելի կրթուած է, այնքան էլ կրթուած է նրա հաշակը. որքան համաչափութիւն կայ նրա խելքի, զգացմունքների, գիտութեան պաշարի հետ, այնքան էլ համաչափութիւնը երևում է նրա զգեստների մէջ. եթէ կեանքն ու հանգամանքները նրան չեն հարկադրում բարի մարդ դալ, առնել շուկայից այնպիսի շոր, որ նրա կազմուածքին յարմար չէ։

4. Շալի զգեստ։

տայ այն իսկական բախտաւորութիւնը, ինչ որ հարկաւոր է կնոջը։ Որ նա ինքը կարէ իր զգեստը իր հաշիվով և առաջնորդուելով այն կարգադրութիւններից որ մեզ տալիս է եւրոպական ձեռագործը։

Կնոջ ամենահիանալի զարդարանքը պարզութիւնն է և բոլոր ինտելիգենտ կանայք պարզ և հասարակ են հագնուած։ Հայ կինը եթէ մտաւորապէս առաջադէմ լինի, եթէ քննչանն նրա զգացմունքները, այն ժամանակ նոյնպէս կը նրբանայ նրա հաշակը և նա ուրիշ հաշակին անդիտակցաբար չի ուզենալ.

Զմրան վերարկու մորթով։

Տեսէք ինչ գեղեցիկ է դերասանուհին բեմի վրայ թագուհու զգեստում. հագցրէք այդ զգեստը գեղջկուհուն և գեղեցիկ գեղջկուհին ծիծաղի առարկայ կը դառնայ։ Տեսէք ինչ գեղեցիկ է բանուորը իր բլուզի մէջ, իր կոշտացած ձեռներով, իր ծուռ գլխարկով, իր խառնուած մազերով, հագցրէք նրան [illegible] և նա [illegible] կը դառնայ նրան վրայ։ Նայեցէք դուռն մօտ կանգնած աղախնին, ինչ բնական է նրա զգեստը, իր ձեռով կարած, ինչպէս որոշում է նրա մարմնի կանոնաւորութիւնը, բայց նայեցէք մի ուսին, որ իր խանումի շորերով պչնել է, որքան ծիծաղելի է։ Պարզութիւն, բնականութիւն և շնորհք,—ահա ինչ է հարկաւոր կնոջը։

=

Պատ. 2. Ուսերի ծածկոց. Այս ծածկոցը գործւում է քրդէ թելից ձեռով երկու մարուկով. Գործուածքը շատ սերտ չէ եւ թելերը անցնում են ոչ որոր-միորը, այլ խաչաձեւ. ծածկոցը շորս կողմից կարելի է շրջապատել կամ սպիտակ աղւամազով, կամ սպիտակ պլիւշով. Շորս հանգոյցով վերջանում է ծածկոցի բոլոր զարդարանքը, երկուսի ուսերի վրայ եւ երկուսի կրծքի վրայ, վերեւի մասում, մարուկի երկու կողմից։ Այդ ծածկոցի գործուածքի սկզբնաւորութիւնը տպագրած է Տարազի այս տարւան № 1 մէջ. Պատկեր 10.

Պատ. 6. Թեթեւ գործուածք հողաթափի վրայ. Այս գործուածքը հնարպայացնում է այն զարդը, որ ատնագործւում է հողաթափի վրայ. Ատնագործուածքը կարող է լինել ոսկեթել կամ մետաքսի գունագոյն թելերով. Հողաթափի ձեւն ամբողջապէս ցոյց է տրած Տարազի այս տարւան № 1-ի մէջ (պատկեր 3).

Պատ. 1. Ատնագործած գանտրակի վրայի բարձի երես. Վերին ասպիճանի շրջ է այդ գործուածքը եւ շատ գեղանկար. Այդ գործուածքը կանայի վրայ անել ափսոս է, չի ունենայ կարեւոր շքեղութիւնը. դա պէտք է ծառայեցնել բարակ ասղով ոսկեթել եւ մետաքսեայ թելերով եւ դուրս ընկած նախշերով։ Ծաղիկները պէտք է յարմարեցնել գոյներով, իսկ տերեւները բոլոր կանաչ պէտք է անել. Կարելի է եւ իրրեւ նորօրինակ բան տերեւներին տալ սպիտակ գոյն.

Պատ. 3. Բաց լիֆ մետաղի մարուկով. Այս լիֆը կարելի է կարել կիսէպից, մետաքսի կտորից եւ նոյն իսկ շքից. ձեւը շատ հեշտ է եւ պարզ երեւում է նկարի վրայ. Լիֆը սեղմւում է մէջքի վրայ երեք շերտանի զոտիկով, որի ծայրերը միանում են մետաղի մարուկով. Մետաղի մարուկի ձեւը եւ նրա կարները ցոյց են տուած Տարազի այս տարւան առաջին համարում—պատ.7,8,9

ՄԻՍԿԵՍՈՒԹԻՒՆ

Նարինջի կեղեւի օգտակար գործածութիւնը։

Սովորութիւն է մեր մէջ նարինջի կեղեւները դէն ձգել իբրեւ անպէտք բան, մինչդեռ այդ կեղեւներից կարելի է լաւ բացդրաւնիք պատրաստել, որ թանգ չի նստիլ տնտես տանտիկնոջը։

1). Նարինջի կեղեւը շորս մաս կըտրտելով պէտք է թաթախել թանձր շաքարաջրի (սիրոպ) մէջ եւ ապա շորացնել տաք պատարանի ծակած քարայում։ Այս շորացած կեղեւները շատ լաւ են լինում խմորեղէնների մէջ. պէտք է դրանց բարակ կտրատել, կամ թրել եւ ածել խմորեղէնի մէջ ու այնպէս եփել—թխել.

2). Նարինջի կեղեւից [illegible]

5. Միջահասակ կնոջ զգ. երեկոյթի։

6. Հողաթափի ատղ. զարդ։

կով պէտք է կտրել դեղին կաշին, այնպէս, որ նաբ եղածին չափ թող մնայ սպիտակ կեղեւիցը, յետոյ այդ դեղին կաշին պէտք է մանր կտրտել, ածել շիշի մէջ, ածել քիչ շաքար եւ լցնել վրան լաւ օղի, որպէսզի լաւ նստի, պէտք է մի շաբաթ շիշը պահել տաք տեղ։ Դրանից յետոյ պէտք է եփել թանձր շա-

բարաջուր մէկ-ութերորդական գրանքայ շաքարից, ածել դրա վրայ շշի միջի ըմպելիքը եւ սառելուց յետոյ քամել ծաղարի միջոցով, կամ նապաստակ ծաղարի մէջ դնելով թուղթ կամ զիկրոսկոպիական քամրակ. Եթէ շշի մէջ աւելացնէք մի կամ երկու հատիկ հիւ եւ մի քիչ դարչին, կըստանաք մի շատ լաւ ըմպելիք կիւրասոյի համով, որից շատ համեղ փունջ կարելի է շինել թանգագին հիւրերի համար:

Աստրանդակ

Բագու. Ատրպետ. Կարդացինք, երկար է, կընամածամենք տըպագրել խնդրին կրճատումներից յետոյ. Եթէ համաձայն էք, ուղարկեցէք մնացածը. իսկ այդ եղած դիրքով յարմար է „Մուրճի“ համար.

Շուշի. սլ. Ա. Բ. Ուրախութեամբ կուղարկենք ձեր պահանջած գրքերը.

Սղնախ. Ն. Ղ. Ստացանք, շնորհակալ ենք, կըտպագրենք. շտապեցէք ուղարկել մնացածը:

Թիֆլիս. Մ. Մ. Դուք գրում էք՝

„Փողոցները ծիլներով ողողվում են
Երակներս դողդողվում են,
Ուղեղս դղրդվում է
Սիրտս ջղղվում է“

Նախանձելի չէ ձեր դրութիւնը. մանաւանդ որ առաջները զարուն է գալիս: Ձեր խեղճ ուղեղը „դղրդելուց“ կընդանգստանայ, եթէ դուք դադարէք ոտանաւորներ գրելուց. եթէ մեզ չընդունատաք, դիմեցէք բժշկին.

Կ. Պոլիս. „Արեւելք“ լրագրի խմբագրութեան.

Տպագրական խօսքը սուրբ է եւ նրան մնաեցողը պէտք է հանէ իր կեղտոտ կօշիկները. Կախեցէք ձեր խմբագրութեան անդամների քթերից Բէօրնէյի հետեւեալ խօսքերը. „Դայլին գառների վրայ հովիւ նշանակել կամ եզիտին հրապարակախօս-մեեւնոյն է“. . .

Մատ

Շահմատի № 1 խնդրի վճիռը

1. Սպիտակները Դ4—Ե5. Սեւերը Բ5—Դ5×, Բ5—Ե5. Ա5 Բ7. 2. Դ6—Գ4, կամ Ե5 Բ× և մատ:

ԽՆԴԻՐ 3.

Սպիտակներն սկսում են և մատ են տալիս երեք

Սեւերի կողմեր



Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը

Սպիտակների կողմը:

Խմբ.-Հրատ. Տիգրան Նազարեան

Յայտարարութիւններ

Շարունակւում է 1891 թ. բաժանորդագրուած.

ԱՂԲԻՒՐ պատկերազարդ ամսագրի

եւ ՏԱՐԱԶ պատկերազարդ շաբաթաթերթի:

Աղբիւր ամսագրի տարեկան բաժանորդագինը է 3—28 կ. իսկ Տարազինը 6 ռուբլի:

Հասցէն. Тифлисъ, Редакція Агбюръ կամ Таразъ.

Այսօր կիրակի փետրուարի 3-ին քաղաքային տան դահլիճում Հայոց Բարեգործական Ընկ. ընդհանուր ժողովի շարունակութիւնն է, սկիզբը 11 ժամին:

Тип. Ароръ Т. Я. Назарьянъ, уг. Гол. пр. и Бар. ул.

Дозволено ценз. 2 февраля, . Тифлисъ.